ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

21 հունիսի 2016 թվականի **թիվ 77** քաղ. Մոսկվա

Մաքսային միության հանձնաժողովի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշ որոշումներում փոփոխություններ կատարելու մասին

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 68-րդ հոդվածի 4-րդ կետին եւ 180-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի թիվ 257 որոշմամբ հաստատված՝ «Ապրանքների հայտարարագրի լրացման կարգի մասին» հրահանգում եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշմամբ հաստատված՝ «Ապրանքների հայտարարագրի ճշգրտման ձեւը լրացնելու մասին» հրահանգում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո եւ տարածվում է 2016 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունիսի 21-ի
թիվ 77 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաքսային միության հանձնաժողովի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշումներում կատարվող

1. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի թիվ 257 որոշմամբ հաստատված՝ «Ապրանքների հայտարարագրի լրացման կարգի մասին» հրահանգի 15-րդ կետում՝

ա) 11-րդ ենթակետի երրորդ պարբերությունում (աղյուսակից հետո) եւ 43-րդ ենթակետի երրորդ պարբերությունում (աղյուսակից հետո) «եւ Բելառուսի Հանրապետությունում» բառերը հանել.

բ) 45-րդ ենթակետում՝

տասնութերորդ պարբերությունում (աղյուսակից հետո) «եւ Բելառուսի Հանրապետությունում» բառերը հանել.

տասնիններորդ պարբերությունում (աղյուսակից հետո) «Ղազախստանի Հանրապետությունում» բառերը փոխարինել «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում» բառերով.

քսանվեցերորդ պարբերությունում (աղյուսակից հետո) «, Բելառուսի Հանրապետությունում» բառերը հանել.

քսանյոթերորդ պարբերությունում (աղյուսակից հետո) «Ղրղզստանի Հանրապետությունում» բառերը փոխարինել «Բելառուսի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում» բառերով.

գ) 46-րդ ենթակետում՝

հինգերորդ պարբերությունում (աղյուսակից հետո) «, Բելառուսի Հանրապետությունում» բառերը հանել.

վեցերորդ պարբերությունում (աղյուսակից հետո) «Ղրղզստանի Հանրապետությունում» բառերը փոխարինել «Բելառուսի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում» բառերով:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշմամբ հաստատված՝ «Ապրանքների հայտարարագրի ճշգրտման ձևը լրացնելու մասին» հրահանգի 10-րդ կետի 9-րդ ենթակետում՝

ա) չորրորդ պարբերությունը (աղյուսակից հետո) հանել.

բ) վեցերորդ պարբերությունում (աղյուսակից հետո) «Ղրղզստանի Հանրապետությունում» բառերը փոխարինել «Բելառուսի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում» բառերով: